

ԱՆՏՈՆ ԶԵԽՈՎ



ԿԱՇՏԱՆԿԱ

ՊԱՏՄՎԱԾՔ



ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՅՎԱ, 1929

30 MAY 2011

ԱՆՏՈՆ ԶԵԽՈՎ

Կ Ա Շ Տ Ա Ն Կ Ա

Թարգմ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1929



891.710

2-34

u

1007
32937

136

087-3/5-5

6 JUL 2013

5555



I

Փ Ո Ր Զ Ա Ն Ք

Մի շիկամաղ ու ջահել շուն, — տնական և գերմանական կարճա-
սրունք ցեղերի խառնուրդ, — դնչով շատ նման աղվեսի, յետ ու առաջ
եր վազվզում մայթի վրա և անհանգիստ իր շուրջը նայում: Յերբեմն
նա կանգ եր առնում, կընձկընձալով մերթ այս, մերթ այն մրսած
թաթը վեր բարձրացրած՝ աշխատում եր հաշիվ տալ իրան, թե ի՞նչ-
պես յեղավ, վոր մոլորվեց: Նա լավ եր հիշում, թե ինչպես անց-
կացրեց որը և վերջիվերջո ինչպես ընկավ այս մայթի վրա:

Որն սկսվեց նրանով, վոր նրա տերը՝ սեղանագործ Թորոսը՝ գըլ-
խարկը դրեց, կռնատակն առավ կարմիր թաշկինակով փաթաթած
ինչ վոր փայտե բան և կանչեց.

— Կաշտանկա, գնանք:

Իր անունը լսելուն պես շունը դուրս յեկավ դազգահի տակից, ուր
քնած էր տաշեղների վրա, դուրալի կերպով ձգվեց և վազեց տի-
րոջ յետևից: Վարպետ Թորոսին պատվեր տվողները շատ հեռու ելին
ապրում, այնպես վոր՝ նախքան սրա կամ նրա տանը հասնելը, սեղա-
նագործը պետք է մի քանի անգամ մտներ պանդոկ թարմանալու: Կաշ-
տանկան հիշեց, վոր ճանապարհին իրան շատ վատ էր պահում: Ուրա-
խացած, վոր իրան գրոսնելու յեն տանում, թռչկոտում էր, հաջո-
ցով հարձակվում ձիաքարշի վագոնների վրա, ներս էր մտնում բա-
կերն ու ընկնում շների յետևից: Սեղանագործը շուտ-շուտ կոր-
ցնում էր նրան աչքից, կանգ էր առնում և բարկացած գոռում նրա
վրա: Մի անգամ ել նույնիսկ կատաղած բռնեց նրա ախանջից,
քաշքշեց և ասաց ընդհատումներով.

— Սատ...կես... դու..., ան...պի...տան:

Իր պատվիրատուների մոտից դուրս գալուց հետո՝ վարպետ Թորոսը
մի քանի րոպեյով մտավ իր քրոջ տունը, վորտեղ լավ կերավ ու խմեց:

Քրոջ տանից դուրս գալով, նա գնաց իր ծանոթ կազմարարի
մոտ, կազմարարից — պանդոկ, սլանդոկից — սանահոր մոտ և այլն:
Մի խոսքով, յերբ Կաշտանկան հասավ անծանոթ մայթին, արդեն
մուլթն ընկնում էր, և սեղանագործը հարբած էր սաստիկ: Նա թա-
փահարում էր ձեռքերը և, խորը հառաչելով, փնթփնթում.


— Եհ, մեղք էր, մեղք էր: Մենք ահա այժմ գնում ենք փո-
ղոցով և լապտերներին ենք նայում, իսկ մեռնելուց հետո գեհենի
բոցերում պիտի այրվենք...

Յերբեմն ել վարպետ Թորոսը մեղմանում էր, սիրալիր կերպով
կանչում իր մոտ Կաշտանկային և ասում.

— Դու, Կաշ-
տանկա, աննշան
եյակ ես և ուրիշ վո-
չինչ: Մարդու հան-
դեպ դու նույնն
ես, ինչ վոր հյուս-
նը — սեղանագործի
առաջ...


Յեվ ահա, յերբ
նա այսպես խոսում
էր շան հետ, մեկ ել
հանկարծ վորոտաց
յերաժշտախումբը:

Կաշտանկան յետ նայեց և տեսավ,
վոր զինվորների մի ջոկատ փո-
ղոցով ուղիղ գալիս էր իր վրա:
Կաշտանկան չէր սիրում յերաժշ-
տություն, վորը գրգռում էր նրա
ջղերը, ուստի անհանգստացավ և
վռնաց: Նա շատ զարմացավ, տես-
նելով, վոր սեղանագործը, փո-
խանակ վախենալու, վժվժալու և
հաջալու, մեղմ ժպտաց, ուղղվեց
ամբողջ մարմնով և բոլոր մատները լայն բաց արած տարավ դեպի
գլխարկը:



Տեսնելով վոր տերը չի բարկանում, կաշտանկան ավելի բարձր կաղկանձեց և՛ իրան կորցրած՝ կտրեց փողոցն ու անցավ մյուս մայթը:

Յերբ նա զգաստացավ, յերաժշտախումբն ել չեր նվագում և զինվորների շոկատն ել չկար փողոցում: Նա վազեց ափսոսելով, վոր տեղ թողել եր տիրոջը, բայց, ավանդ, սեղանագործն այլևս ափսոսել չեր: Կաշտանկան վազեց առաջ, ապա յետ դարձավ, մեկ ել անցավ փողոցի մյուս կողմը, սակայն սեղանագործը չկար ու չկար, կար-




ծես գետնի տակն անցավ: Նա սկսեց հոտոտել մայթը, հույս ունե- նալով գտնել տիրոջը նրա հետքերի հոտով, սակայն իրենից առաջ նույն ճանապարհով անցել եր անալիտանի մեկը՝ գալոշներով, և այժմ բոլոր նուրբ հոտերը խառնվում էին կառնուկի սուր հոտին, այնպես վոր վոչինչ չեր կարելի վորոշել:

Կաշտանկան վազվզում եր յետ ու առաջ և չեր գտնում տիրոջը. մինչ այդ՝ բոլորովին մթնեց: Փողոցի յերկու կողմերում վառվեցին

լապտերները, տները լուսամուտներում յերևացին կրակներ: Ձյունը խոշոր փաթիլներով թափվում եր ցած և սպիտակ սավանով ծածկում մայթերը, ձիերի մեջքերը, կառապանների գլխարկները. և քանի ավելի յեր մթնում, այնքան ավելի սպիտականում էին առարկաները: Կաշտանկայի մոտով, նրա տեսողության առաջը փակե- լով և նրան վոտքերով հրելով, անդադար առաջ և յետ էին անցնում պատվիրատուներ: (Ամբողջ մարդկությունը կաշտանկան բաժանում եր յերկու չափազանց անհավասար մասերի—սեփականատերեր և պատ- վեր տվողներ. մեկի և մյուսի մեջ կար եյական տարբերություն. առաջինները իրավունք ունեին նրան ծեծելու, իսկ յերկրորդներին ինքն իրավունք ուներ կծելու): Պատվիրատուները ուր վոր շտա- պում էին և վոչ մի ուշադրություն չէին դարձնում նրա վրա:

Յերբ բոլորովին մթնեց, հուսահատությունն ու սարսափը տի- րեցին կաշտանկային: Նա կուչ յեկավ մի մեծ դռան առջև և սկսեց դռնագին լաց լինել: Վարպետ Թորոսի հետ կատարած ճանապար- հորդությունը հոգնեցրել եր նրան, նրա ականջներն ու թաթերը մրսում էին. բացի այդ, նա սաստիկ քաղցած եր: Ամբողջ որը նա կարողացել եր ուտել յերկու անգամ—կաղմարարի մոտ կերել եր մի քիչ շրեշ և պանդուկներից մեկումն ել գտել եր յերչիկի թաղանթ. ահա բոլորը: Յեթե նա մարդ լիներ, ապա հավանորեն կմտածեր.


«Վհ, այսպես ապրել անկարելի յե. պետք է ինքնասպանություն գործել»:



II

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԱՆԾԱՆՈԹԸ

Սակայն նա վոչ մի բանի մասին չէր մտածում և միայն լալիս էր: Յերբ փափուկ ձյունը բոլորովին ծեփեց նրա մեջքն ու գլուխը, և նա ուժասպառությունից ծանր նիւրհի գիրկն ընկավ, հանկարծ



խղճուկ... Դեհ, մի բարկանար... ներողություն:

տան գլխավոր դռուը, վորի առաջ նա կուչ եր յեկել, չրխկոցով բացվեց և խփեց նրա կողքին: Կաշտանկան վեր թռավ: Բացված դռնից դուրս յեկավ պատվիրատուների կարգին պատկանող ինչ վոր մարդ: Կաշտանկան կընծկնծաց և ընկավ անծանոթի վոտքերի տակ, ուստի և նա չէր կարող ուշադրություն չդարձնել շնիկի վրա: Անծանոթը կուացավ դեպի շնիկն ու հարցրեց.

— Գարշելի, դո՞ւ վորտեղից: Յես քեզ զարկեցի, հա՛: Ո՛հ, խղճուկ,

Կաշտանկան նայեց անծանոթին իր թարթիչներից կախկիւսված ձյան բյուրեղների միջից և տեսավ իր առաջ մի կարճահասակ և հաստլիկ մարդ՝ ուռած և ածելած յերեսով, գլանաձև գլխարկը գլխին, կոճակները բաց մուշտակը հագին:

— Ի՞նչ ես մղկտում — շարունակեց նա; մատով ձյունը թափելով շան մեջքից: — Ու՞ր ե քո տերը: Ինչպես յերևում ե, դու կորե՞լ ես: Ա՛խ, խեղճ շնիկ: Հիմա ի՞նչ անել:

Կաշտանկան, անծանոթի ձայնի մեջ նկատելով ցավակցության և սիրալիրության շեշտ, լիզեց նրա ձեռքը և ավելի դառնազին վնդստաց:


— Ա՛խ, դու լավիկ, ծիծաղելի արարած — ասաց անծանոթը: — Իսկական աղվես: Ե՛հ, ի՞նչ արած, դնանք ինձ հետ: Գուցե դու մի բանի պետք գաս... Ապա, հու՛յտ:

Նա ձայլացրեց շրթունքներն ու Կաշտանկային ձեռքով նշան արավ, վորը մի բան միայն կարող էր նշանակել — «գնանք»:

Կաշտանկան հետևեց նրան:

Կես ժամ չանցած, նա արդեն նստած էր հատակին մի մեծ և լուսավոր սենյակում և, գլուխը մի կողմ թեքած, քնքշությամբ և հետաքրքրությամբ նայում էր անծանոթին, վորը սեղան նստած ճաշում էր: Անծանոթը ուտում էր և տալիս նրան պատառներ... Անծանոթը նախ տվեց նրան հաց և պանրի կանաչ կեղև, ապա մի կտոր միս, կարկանդակի կեսը, հավի վոսկրներ, խկ շնիկը, սաստիկ քաղցած լինելով, այդ բոլորը կերավ այնքան արագ, վոր համ ել չզգաց: Վորքան շատ էր ուտում նա, այնքան ավելի քաղցն զգալի յեր դառնում:

— Յերևում ե, քո տերերը շատ վատ են կերակրում քեզ, — ասում եր անծանոթը, նայելով, թե ինչ կատաղի ագահությամբ նա կուլ է տալիս չծամած կտորները: — Յե՛վ վրձա՛ն լղար ես դու: Կաշի և վոսկրներ:



Կաշտանկան շատ կերավ, բայց չկշտացավ, այլ շշմեց ուտելուց: Ճաշից հետո նա պառկեց սենյակի մեջ տեղը, վոտքերը յերկարացրեց, և բոլոր մարմնի մեջ ախորժեղի խոնջություն զգալով, սկսեց պոչը շարժել: Յե՛վ մինչդեռ նրա նոր տերը բազկաթոռի վրա ձգված

պապիրոս եր ծխում, շնիկը շարժում եր պոչը և աշխատում լուծել այն հարցը, թե վորտեղ է լավ — անծանոթի մոտ, թե՞ սեղանագործի: Անծանոթի մոտ կահավորությունն աղքատիկ է և տգեղ. բացի բազկաթոռներից, բազմոցից, լամպից և գորգերից՝ նա վոչինչ չունի,



և նրա սենյակը դատարկ է թվում: Իսկ սեղանագործի բնակարանը լեփ-լեցուն է իրերով. նա ունի սեղան, դազգահ, տաշեղների կույտ, ռանդաներ և այլ գործիքներ, դեղձանիկը մեջը վանդակ, տաշտակ... Անծանոթի մոտ հոտ չկա, իսկ սեղանագործի բնակարանում միշտ

մշուշ ե կանգնած և զգացվում ե սոսնձի, լակի և տաշեղների հրաշալի հոտ: Դրա փոխարեն անծանոթը մի շատ մեծ առավելութուն ունի՝ նա ուտելու բան շատ ե տալիս և, յեթե խղճով ասենք, յերբ կաշտանկան նստած եր սեղանի մոտ և խղճալի կերպով նայում եր անծանոթին, նա ամենևին չխփեց նրան, վոտքերն հատակին չզարկեց և վոչ մի անգամ չգոռաց. «Կորիւր այստեղից, անիծված»:

Ծիւսելը վերջացնելով, նոր տերը դուրս յեկավ և մի րոպեյից հետո վերադարձավ՝ ձեռքում բռնած մի փոքրիկ ներքնակ:

— Ե՛յ, դու, շուն, յեկ այստեղ. — ասաց նա, դնելով ներքնակը բազմոցի կողքին, անկյունում: — Պառկի՛ր այստեղ. քնի՛ր:


Ապա նա հանգցրեց լամպն ու դուրս գնաց: Կաշտանկան փուլեց ներքնակի վրա և փակեց աչքերը: Փողոցից լսվեց հաջոց, և նա ուզում եր պատասխանել, բայց հանկարծ անսպասելի կերպով նրան տիրեց մի թախիծ: Նա՝ հիշեց վարպետ Թորոսին, նրա վորդուն՝ Պետիկին, իր դուրեկան տեղը դազգահի տակ... Հիշեց կաշտանկան, վոր ձմեռվա յերկար գիշերներին, յերբ սեղանագործը տաշում եր կամ լսելի ձայնով լրագիր եր կարդում, Պետիկը սովորաբար խաղում եր նրա հետ... Նա՝ կաշտանկայի յետևի թաթերից բռնած՝ դուրս եր քաշում շանը դազգահի տակից և այնպիսի ֆոկուսներ եր անում նրա հետ, վոր խեղճի աչքերը սևանում եյին և մարմնի բոլոր հոգերը ցավել սկսում: Նա ստիպում եր շանը ման գալ յետևի թաթերի վրա, նրան գանգ եր շինում, այսինքն սաստի՛լ քաշում եր պոչից այնպես, վոր խեղճը մղկտում եր ցավից և հաջում եր, յերբեմն ել նրան քթախոտ եր քաշել տալիս... Առանձնապես տանջալից եր հետևյալ ֆոկուսը. Պետիկը կապում եր թելի ծայրին մի կտոր միս և տալիս կաշտանկային, և յերբ վերջինս կուլ եր տալիս, նա բարձր քրքիշով դուրս եր քաշում միսը նրա ստամոքսից: Յեւ վորքան

պայծառ եյին հիշողությունները, այնքան ավելի բարձր և տխրագին եր մղկտում կաշտանկան:

Սակայն շուտով հոգնածությունն ու տաքությունը հաղթեցին տխրությանը... Նա սկսեց նիրհել: Նրա յերևակայության մեջ հանդես յեկան շներ, յեկավ անցավ ի միջի այլոց նաև թավամազ, աչքի



վրա հատ ունեցող, ծեր Բողարը, վորին նա այսօր տեսել եր փողոցում: Պետիկը՝ դուրը ձեռքին՝ ընկավ Բողարի յետևից, հետո ինքն հանկարծ ծածկվեց թավ բրդով, ուրախաձայն հաջոցով մոտեցավ կաշտանկային: Կաշտանկան ու նա բարեկամաբար քիթ-քիթ տվին, հոտոտեցին միմյանց և վազեցին փողոց:




III

ՆՈՐ, ՇԱՏ ԴՈՒՐԵԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Յերբ Կաշտանկան զարթնեց, արդեն լուսացել էր. փողոցից լսվում էր աղմուկ, վորպիսին լինում է միայն ցերեկը: Սենյակում վոչ վոք չկար: Կաշտանկան ձգձգվեց, հորանջեց և բարկացկոտ ու մռայլ սկսեց շրջել սենյակում: Նա հոտոտեց անկյուններն ու կահկարասին, նայեց միջանցքը և

վոչ մի հետա-
քրքիր բան
չտեսավ: Բա-
ցի միջանցքը
տանող դռ-
նից կար նաև
մի այլ դուռ:
Մի քիչ մտա-
ծելուց հետո՝
Կաշտանկան



չանգոտեց այս դուռը յերկու թաթիկներով, բաց արավ և մտավ հետեյալ սենյակը: Այստեղ մահճակալի վրա, տաք վերմակով ծածկված, քնած էր ցերեկվա անծանոթը:

— Ռոռո... — մոմռաց նա, բայց հիշելով անցյալ որվա ճաշը, պոչը շարժեց և սկսեց հոտոտել:

Նա հոտոտեց անծանոթի կողիկներն ու շորերը և գտավ, վոր նրանից ձիու հոտ է գալիս: Ննջարանում ուր վոր տանող մի դուռ ևս կար, վորը նույնպես փակ էր: Կաշտանկան չանգոտեց այդ դուռը, կրծքով հրեց, բաց արավ և իսկույն զգաց տարրերինակ, չափազանց

կասկածելի մի հոտ: Նախագգալով անախորժ հանդիպում, մոմալով և շուրջը նայելով, կաշտանկան մտավ մի փոքրիկ սենյակ, վորի պատերը պաստառած էին կեղտոտ պաստառով, և վախեցած յետ-յետ քաշվեց: Նա տեղավ ինչ վոր անսպասելի և զարհուրելի բան: Գլուխն ու վիզը դեպի գետին կռացրած, թևերը չռած և ֆշշալով, ուղիղ նրա վրա յեր գալիս մոխրագույն մի սագ: Նրանից մի քիչ հեռու՝ փոքրիկ ներքնակի վրա պառկած էր սալիտակ կատուն. տեսնելով կաշտանկային,



նա վեր թռավ, մեջքը կորացրեց, պոչը ներս քաշեց և նույնպես բարկացած փշտացրեց: Շունը սաստիկ վախեցավ, բայց իր յերկյուղը ծածկելու համար բարձր հաջեց և հարձակվեց կատվի վրա: Կատուն ե՛լ ալեւի կորացրեց մեջքը, փշտացրեց և թաթով խփեց կաշտանկայի գլխին: Կաշտանկան յետ ցատկեց, նստեց չորս թաթերի վրա և՝ դունչը դեպի կատուն յերկրացրած՝ բարձր վնդստոց արձակեց. այդ միջոցին սագը յետևից մոտեցավ շանը և կտուցով ուժեղ թափով զարկեց նրա մեջքին: Կաշտանկան վեր թռավ և հարձակվեց սագի վրա:

— Սա ինչ բան է,— լսվեց բարձր և բարկացկոտ մի ձայն, և սենյակ մտավ անծանոթը՝ խալաթը հագին, գլանակը բերանում: — Սա ի՞նչ է նշանակում: Տեղե՛րդ:

Նա մոտեցավ կատվին, խփեց նրա կորացրած մեջքին և ասաց.



— Մոռան պապի, սա ի՞նչ է նշանակում: Կոխվ եք հանել: Ա՛յ, դու, ծեր անղգամ: Պառկիր:

Դառնալով սագին, նա գոռաց.

— Շորոր-խաթուն, տեղդ:

Կատուն հնազանդ կերպով պառկեց իր ներքնակի վրա և աչքերը փակեց: Նրա դնչին և բեխերին նայողը կնկատեր անբավական

1107 136
32937



նություն. նա ինքը դժգոհ էր այն բանից, վոր տաքացավ և կռվի մեջ մտավ: Կաշտանկան նեղացած վեգստաց, իսկ սազը վիզը մեկնեց և սկսեց տաք-տաք խոսել ինչ վոր բանի մասին, սակայն չափազանց արագ և անհասկանալի:

— Լավ, լավ, — ասաց տերը հորանջելով. — Պետք է խաղաղ ապրել և համերաշխ. — Նա շոյեց Կաշտանկային և շարունակեց.

— Իսկ դու, շեկիկ, մի վախենար... Սա լավ հասարակություն է, չի վիրավորի: Սպասիր, մենք քեզ ինչպես պետք է անվանենք: Առանց անվան չի կարելի, սիրելիս:

Անծանոթը մտածեց և ասաց.

— Ահա թե ինչ... Քո անունը իլլինի Բուշի-ապեր... հասկանում ես... Բուշի-ապեր:

Յեվ, մի քանի անգամ կրկնելով «Բուշի-ապեր» խոսքերը, դուրս գնաց: Կաշտանկան նստեց և սկսեց հետազոտել: Կատուն անշարժ նրստած էր ներքնակի վրա և քնած էր ձեացել: Սազը, վիզը ձգած և միևնույն տեղում մի վոտը վերցնելով, մյուսը դնելով, շարունակում էր տաք-տաք և արագ խոսել ինչ վոր բանի մասին: Ըստ յերևույթին, սա շատ խելոք սազ էր. յուրաքանչյուր յերկար պարբերությունից հետո նա զարմացած յետ-յետ էր գնում և այնպես ձեացնում, վոր հիացած է իր ճառով: Լսելով նրան և մոմռալով, Կաշտանկան սկսեց հոտոտել անկյունները: Անկյուններից մեկում դրած էր մի փոքրիկ տաշտակ, վորի մեջ նա տեսավ թրջած սիսեռ և հացի փափկացած կտորներ: Նա փորձեց սիսեռը և անհամ գտավ, փորձեց հացի կտորները և սկսեց ուտել: Սազը ամենևին չնեղացավ, վոր անծանոթ շնիկը ուտում է իր կերակուրը, այլ, ընդհակառակը, խոսեց ավելի վողեւորված և իր վստահությունն ապացուցելու համար ինքը մոտեցավ տաշտակին և կերավ սիսեռի մի քանի հատիկներ:

IV


ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐ ՍԵՆՅԱԿՈՒՄ

Մի քիչ հետո նորից ներս մտավ անծանոթը, բերելով իր հետ ինչ վոր մի տարրիկնակ բան, նման դարբասի և Ո տառին: Այդ փայտյա, կոպիտ կերպով շինված Ո-ի վերին ձողից կախված էր մի գանգ և կապած մի ատրճանակ. գանգի լեզվակից և ատրճանակի վոտից կապած ելին թուկեր: Անծանոթը դրեց Ո-ն սենյակի մեջ տեղը, յերկար ժամանակ ինչ որ քանդում էր և կապկպում, ապա, նայելով սազին, ասաց:

— Շորոր-Սաթուն. համեցեք:

Սազը մոտեցավ նրան և կանգ առավ սպասողական դրության մեջ:

— Ապա, — ասաց անծանոթը, — սկսենք հենց սկզբից: Ամենից առաջ զլուխ տուր և ռեվերանս արա, — շուտ:



Շորոր-Սաթունը վիզը յերկարացրեց, գլխով վողջույններ ավեց և թաթը գետնին քսեց:

— Այդպէս, կեցցես...այժմ մեռիր:

Սազը պառկեց մեջքի վրա և թաթերը վեր պարզեց: Ելի այսպիսի մի քանի ֆոկուսներ անելուց հետո՝ անծանոթը հանկարծ բռնեց գլուխը և, դեմքին սարսափի արտահայտութիւն տալով, գոռաց.

— Ոգնութիւն, հրգեհ, այրվում եմք:

Շորոր-Սաթունը վազեց դեպի Ո-ն, կտուցով բռնեց թոկն ու զանգահարեց:

Անծանոթը շատ գոհ մնաց: Նա շոյեց սազի վիզն ու ասաց.


— Կեցցես, Շորոր-Սաթուն: Այժմ յենթադրիր, վոր դու ակնավաճառ ես, ծախում ես վոսկեղեն և ադամանդներ: Յենթադրիր, վոր դու մտնում ես քո խանութն ու գտնում այնտեղ գողեր: Այդ դեպքում ինչպէս կվարվեյիր դու:

Սազը կտուցով բռնեց մյուս թոկն ու քաշեց, վորի հետեանքով իսկույն և յեթ լսվեց խլացուցիչ տրաքոց: Կաշտանկային շատ դուր յեկավ զողանջը, իսկ տրաքոցը այնքան հիացրեց նրան, վոր նա սկսեց վազել Ո-ի շուրջն ու հաշել:

— Քուչի-ապեր, տեղդ, — գոռաց նրա վրա անծանոթը: — Լռել:

Շորոր-Սաթունի աշխատանքը ատրճառակ կրակելով չվերջացավ: Դրանից հետո մի ամբողջ ժամ անծանոթը, սանձից քաշելով և մտրակը շրթակացնելով, պտտեցնում եր նրան իր շուրջը, ըստ վորում սազը պետք է թռչեր բարյերի վրայով, շրջանակի միջով, պետք է ծառս կանգնէր, այսինքն նստեր պոչի վրա և թաթերը թափահարեր: Կաշտանկան աչքերը չէր հեռացնում Շորոր-Սաթունից, հիացմունքից վնգստում եր և մի քանի անգամ վազեց նրա յետևից զիլ հաջոցով:

Հոգնեցնելով սազին և իրան, անծանոթը սրբեց ճակատից քրտինքը, դիտեց իր շուրջն ու գոռաց.



— Մարիամ, հապա կանչիր այստեղ Յեխաթավալին:

Չանցած մի րոպե, լավեց խանչյուն... Կաշտանկան մոմուաց, քաջ ձևացավ, սակայն համենայն դեպս ավելի մոտեցավ անծանոթին: Դուռը բացվեց, և ներս նայեց մի պառավ. ինչ վոր ասելուց հետո, նա ներս թողեց մի սև, շատ տգեղ խոզ: Վոչ մի ուշադրություն չդարձնելով Կաշտանկայի մոմուցին, խոզը վեր բարձրացրեց յուր կնճթածայրն ու ուրախ խանչեց: Ըստ յերևույթին նրան շատ հաճելի յեր տեսնել իր տիրոջը, կատվին և Շորոր-Սաթունին: Յերբ նա մոտեցավ կատվին և թեթևակի բոթեց նրա կողքը իր կնճիթի ծայրով և ապա ինչ վոր խոսեց սագի հետ, նրա շարժումների, ձայնի և պոչի տատանումների մեջ զգացվում էր մեծ բարեսրտություն: Կաշտանկան իսկույն հասկացավ, վոր այդպիսիների վրա հաջելն ու մըռմուալը անողուտ է և ավելորդ:

Տերը հեռացրեց Ուն և ձայն տվեց.

— Մոռան-պապի, համեցեք:

Կատուն վեր կացավ, ծույլ-ծույլ ձգձգվեց և դժկամությամբ, կարծես մեծ լավություն է անում, մոտեցավ խոզին:


— Հապա, սկսենք յեզիպտական բուրգից, — սկսեց տերը:

Նա յերկար բացատրում էր ինչ վոր բան, ապա հրաման տվեց «Մեկ... յերկու... յերեք»: Շորոր-Սաթունը «յերեք» խոսքի հետ թևերը թափահարեց և թռավ խոզի մեջքին: Յերբ նա, թևերով և վզով հավասարակշռություն պահելով, ամրացավ կոշտամազ մեջքին, Մոռան-պապին անկենդան ու ծույլ, ակնհայտնի անուշադրութամբ և այնպիսի ձևով, վոր կարծես արհամարհում է և կոպեկի արժեք չի տալիս իր հմտությանը, բարձրացավ խոզի մեջքին, հետո դժկամությամբ թռավ սագի մեջքին՝ կանգնեց յետևի թաթերի վրա: Ստացվեց այն, ինչ վոր անծանոթը անվանում էր յեզիպտական բուրգ: Կաշտանկան


կընծկնծաց հիացմունքից, սակայն այդ ժամանակ պառավ կատուն հորանջեց և, հավասարակշռությունը կորցնելով, ցած գլորվեց սագի վրայից: Շորոր-Սաթունը յերերաց և նույնպես գլորվեց: Անծանոթը գոռաց, ձեռքերը թափահարեց և նորից սկսեց բացատրել ինչ վոր բան: Ամբողջ մի ժամ, չարչարվելով բուրգի հետ, անխոնջ տերը սկսեց սովորեցնել Շորոր-Սաթունին ման գալ կատվին հեծած, ծխել և այլն:

Վարժությունները վերջացան նրանով, վոր անծանոթը սրբեց ճակատից քրտինքն ու դուրս գնաց: Մոռան-պապին անբավականությամբ փշտացրեց, պառկեց ներքնակի վրա և աչքերը փակեց: Շորոր-Սաթունը գնաց դեպի տաշտակը, իսկ խոզին պառավը դուրս տարավ:

Շնորհիվ բազմաթիվ նոր տպավորությունների, Կաշտանկայի համար որն անցավ աննկատելի կերպով, իսկ յերեկոյան նա



իր ներքնակով տեղավորվեց կեղտոտ պատառներով պատած սենյակում և գիշերեց Մուռան-պապիի և սագի հետ միասին:



V

ՏԱՂԱՆԴ Ե, ՏԱՂԱՆԴ

Անցավ մի ամիս:

Կաշտանկան ընտելացավ այն բանին, վոր իրեն ամեն յերեկո՝ կերակրում եյին համեղ պատառներով և անվանում եյին Քուչի-ապեր: Նա ընտելացավ նաև անծանոթին և իր նոր ընկերներին, վորոնց հետ միատեղ ապրում եր: Կյանքը գնում եր շատ լավ:

Բոլոր որերն սկսվում եյին միակերպ: Սովորաբար ամենից վաղ զարթնում եր Շորոր-Պաթունը և խալույն մոտենում եր Կաշտանկային կամ կատվին, վիզը կորացնում եր և սկսում խոսել ինչ վոր բանի մասին տաք-տաք, համոզիչ կերպով, սակայն առաջվա նման անհաս-

կանալի: Յերբեմն ել նա գլուխը վեր եր տնկում և արտասանում եր յերկար մենախոսություններ: Ծանոթության առաջին որերին Կաշտանկան կարծում եր, թե նա շատ ե խոսում նրա համար, վոր շատ խելոք ե, բայց կարճ ժամանակ անցնելուց հետո, նա կորցրեց դեպի սագն ունեցած հարգանքը. յերբ վերջինս մոտենում եր նրան իր յերկար ճառերով, Կաշտանկան ել պոչը չեր շարժում, այլ արհամարհում եր նրան՝ ինչպես ձանձրացնող և զրգվելի շատախոսի, վորը վոչ վոքի քնել չի թողնում, և առանց այլևայլության պատասխանում եր նրան «ըմ... մոռո... ըմ... մոռո, մոռո...»:



Իսկ Մուռան-պապին ուրիշ տեսակ ազա յեր: Սա, զարթնելով, վոչ մի ձայն ու ծպուտ չեր հա-

նում, չեր շարժվում և նույնիսկ աչքերը չեր բացանում: Նա ամենին կարթնել չեր ցանկանա, վորովհետև, ինչպես յերևում եր, չեր սիրում կյանքը: Վոչ մի բան նրան չեր հետաքրքրում, ամեն ինչի նա անփութ վերաբերմունք եր ցույց տալիս, ամեն բան արհամար-

հում երևի և նույնիսկ, իր համեղ ճաշն ուտելիս, զարշանքով փշտացնում երբ։ Այդպես եր Մուռան պապին։

Զարթնելով, Կաշտանկան սկսում եր շրջել սենյակից սենյակ և հոտոտել անկյունները։ Միայն նրան և կատվին եր թույլ տրվում շրջել ամբողջ բնակարանը. սազը իրավունք չունեի կեղտոտ պատաններով սենյակից վտարել դուրս գնել, իսկ Ցեխաթավալն ապրում եր ուր վոր բակում և յերևում եր միայն վարժությունների ժամանակ։



Նաև Տերը զարթնում եր ուշ և թեյ խմելուց հետո իսկույն սկսում եր իր ֆոկուսները։ Ամեն ոք ներս ելին բերվում սենյակ Ուն, մտրակը, շրջաններ, և ամեն ոք արվում եր միևնույն բանը։ Վարժությունները շարունակվում ելին յերեք-չորս ժամ, այնպես վոր յերբեմն Մուռան-պապին հոգնածությունից որորվում եր հարբածի պես, Շորոր-Սաթունը բաց եր անում կտուցը և ծանր-ծանր շնչում, իսկ տերը սաստիկ կարմրում եր և վոչ մի կերպ չեի կարողանում սրբել ճակատից քրտինքը։

Վարժություններն ու ճաշը որերն հետաքրքիր ելին դարձնում, իսկ յերեկոները անցնում ելին ձանձրալի։ Սովորաբար յերեկոյան, տերը ուր վոր գնում եր, տանելով իր հետ կատվին և սագին։ Մենակ մնալով, Կաշտանկան պառկում եր ներքնակի վրա և թախծում։ Թախծը

աննկատելի կերպով և աստիճանաբար պատում եր նրա սիրտը, ինչպես մութը պատում ե սենյակը։ Սկսվում եր նրանից, վոր շունը կորցնում եր հաշիւը, սենյակից սենյակ վազելու և նույնիսկ նայելու ցանկությունը, հետո նրա յերևակայության մեջ յերևան ելին՝ գալիս յերկու անորոշ պատկերներ, վոչ շան, վոչ մարդու, սիրելի և դուրեկան, սակայն անհասկանալի դեմքերով։ Նրանց յերևալու ժամանակ Կաշտանկան սկսում եր պոչը շարժել և նրան թվում եր, թե ինքը նրանց մի ժամանակ և մի տեղ



տեսել և սիրել ե... Իսկ քնելիս նա ամեն անգամ զգում եր, վոր այդ պատկերներից սոսնձի, տաշեղների և լակի հոտ ե գալիս։

Յերբ նա բոլորովին ընտելացավ նոր կյանքին և, լղար, վոսկրոտ կերպարանքը փոխելով, դարձավ գեր ու փայփայած շուն, մի անգամ, վարժություններն սկսելուց առաջ, տերը շոյեց նրան և ասաց.



— Քուչի-ապեր, ժամանակ ե գործով զբաղվել: Բավական ե ճանճեր քշես: Յես ուզում եմ քեզ ձեռնածու դարձնել... Ձեռնածու լինել ուզում ես:

Յեւ տերն սկսեց սովորեցնել նրան: Առաջին դասին նա սովորեց կանգնել և քայլել յետևի թաթերի վրա. մի բան, վոր շատ եր



դուր գալիս շանը: Յերկրորդ դասին նա պետք ե յետևի թաթերի վրա կանգնած թռչեր և բռներ շաքարի կտորը, վոր ուսուցիչը բարձր բռնում եր նրա գլխի վերևը: Ապա հետևյալ դասերին նա պարում եր, վազում եր սանձած, նվազած ու թյան տակ չնոսում եր, գանգա-

հարում և կրակում եր, իսկ մի ամսից հետո արդեն կարողանում եր հաջողութեամբ փոխարինել Մոռան-պապիին «յեզիպտական բուրգում»: Նա սովորում եր մեծ սիրով և շատ բավական եր իր առաջադիմութեամբ: Սանձով և լեզուն հանած վազելը, շրջանի միջից թռչելը և պառավ Մոռան-պապիի վրա նստած ման գալը մեծ հաճույք ելին պատճառում նրան: Յուրաքանչյուր հաջողած ֆոկուսին հետևում եր նրա գիլ, խանդավառ հաջոցը, իսկ ուսուցիչը, զարմացած ու հիացած, շփում եր ձեռքերը:

— Տաղանդ ե, տաղանդ... — ասում եր նա, — անվիճելի տաղանդ: Դու իսկապես հաջողութեամբ կունենաս:


Յեւ Քուչի-ապերը այնպես ընտելացավ «տաղանդ» խոսքին, վոր ամեն անգամ, յերբ տերը արտասանում եր այն, նա վեր եր թռչում և չորս կողմը նայում, կարծես այդ բառը նրա անունը լիներ:

VI

ԱՆՀԱՆԳԻՍ ԳԻՇԵՐ

Քուչի-ապերը շան յերազ տեսավ, վոր իբր նրա յետևից ե քնկել դռնապանը ցախավելը ձեռքին, և նա յերկյուղից զարթնեց: Սենյակում մութն

եր և խեղդուկ: Կծում ելին լվերը: Քուչի-ապերն առաջ յերբեք չեր վախենում մթնից, բայց այժմ, չգիտես ինչու, սարսափը տիրեց



նրան, և նա հաջել ուզեց: Հարեան սենյակում բարձր հառաչեց տերը, հետո իր բնում խուռացրեց խողը, վորից հետո ամեն ինչ լռեց: Յերբ մտածում ես

ուտելու մասին, կարծես սիրտդ թեթևանում ե, և Քուչի-ապերը սկսեց մտածել, թե ինչպես այսօր Մոռան-պապիից գողացավ հավի վոտը և պահեց ընդունարանում, պահարանի և պատի արանքում, վորտեղ շատ փոշի և վոստայն կար: Վատ չեր լինի այժմ գնալ նայել՝ տեղն ե այդ վոտը, թե վոչ: Շատ կարելի յե տերը գտել և

կերել: Սակայն լուսաբացից շուտ չի կարելի դուրս գալ սենյակից. այսպես եր կարգը: Քուչի-ապերը փակեց աչքերը, վոր շուտ քնի, վորովհետև նա փորձից գիտեր, վոր քանի շուտ քնես, այնքան շուտ կլուսանա: Բայց հանկարծ նրանից վոչ հեռու լավեց տարրորինակ մի աղաղակ, վորից նա ցնցվեց և թռավ ու վոտքի կանգնեց: Աղաղակողը Շորոր-Խաթունն էր: Այս աղաղակը տարբերվում էր նրա սովորական շատախոսութունից, անսովոր և անբնական էր, նման բացվող դարբասի ձոնչյունին: Մթության մեջ վոչինչ չտեսնելով և չհասկանալով, Քուչի-ապերը ավելի վախեցավ և մոմռաց.

— Ը-մ... մըռռռ...

Անցավ այնքան ժամանակ, վորքան հարկավոր է մի լավ վոսկոր կրծելու համար, — աղաղակը չկրկնվեց: Քուչի-ապերը քիչ-քիչ հանգստացավ և ննջեց: Յերագու՜մ նա տեսավ յերկու մեծ սև շուն, վորոնց ազդրներից և կողքերից կախկիւված էին անցյալ տարվա բրդի ծվեններ. նրանք մեծ տաշտից ազահությամբ ուտում էին ողվուցքը, վորից բարձրանում էր սպիտակ գոլորշի և տարածվում քաղցր հոտ: Յերբեմն նրանք յետ էին դառնում և նայում կաշտանկային, բաց էին անում ատամներն ու մոմռում. «Իսկ քեզ չենք տա»: Սակայն հանկարծ տնից դուրս թռավ մուշտակ հագած մի գեղջուկ և քշեց նրանց մտրակով. այդ ժամանակ Քուչի-ապերը մոտեցավ տաշտին և սկսեց ուտել, բայց հենց վոր գեղջուկը հեռացավ, յերկու սև շները, մոնչալով, հարձակվեցին նրա վրա, և հանկարծ նորից լավեց խլացուցիչ աղաղակը:

— Կըղ-ղե՛, կըղ-ղե՛, — աղաղակեց Շորոր-Խաթունը:

Քուչի-ապերը զարթնեց, վեր թռավ և, ներքնակի վրայից չհեռանալով, վոռնալ սկսեց: Նրան թվում էր թե աղաղակողը Շորոր-Խաթունը չէ, այլ մի կողմնակի անձ: Խոզաբնու՜մն էլ, չգիտես ինչու, նորից խոնչաց խոզը:



Բայց ահա լսվեց հողաթափների քստքստոց, և սենյակ մտավ տերը՝ խալաթը հագին և մոմը ձեռքին։ Միմիացող լույսը ընկավ կեղտոտ պաստառների և առաստաղի վրա և ցրեց խավարը։ Քուչի-ապերը տեսավ, վոր սենյակում կողմնակի վոչ վոք չկա։ Շորոր-Սաթունը նստած էր հատակին և արթուն էր։ Նրա թևերը չոված էին, իսկ կտուցը բաց էր. մի խոսքով, նա այնպիսի տեսք ուներ, վոր կարծես շատ հոգնած էր և խմել էր ուզում։ Մռռան-պապին նույնպես արթուն էր։ Հավանորեն, նրան ևս աղաղակն էր արթնացրել։

— Շորոր-Սաթուն, ի՞նչ ե պատահել քեզ. — հարցրեց տերը սաղին։

— Ի՞նչ ես գոռում։ Դու հիվանդ ես։

Սազը լուռ էր։ Տերը շոյեց նրա մեջքն ու ասաց.

— Խենթ, ինքդ չես քնում, ուրիշներին ել չես թողնում։

Յերբ տերը գնաց և տարավ իր հետ մոմը, նորից մոլթը պատեց։ Քուչի-ապորը նորից սարսափը տիրեց։ Սազը չէր բղավում, բայց նրան այնպես էր թվում, թե մթության մեջ կանգնած ե ոտարի մեկը։ Ամենից սարսափելին այն էր, վոր այդ ոտարին կծել չէր կարելի, վորովհետև նա անտեսանելի յեր և չուներ ձև։ Յեվ, չգիտես ինչու, չնիկը կարծում էր, վոր այս գիշեր պետք ե մի շատ վառ բան պատահեր։ Մռռան-պապին ել անհանգիստ էր։ Քուչի-ապերը լսում էր, թե ինչպես նա վոլոր-մոլոր ե գալիս ներքնակի վրա, հորանջում ե և գլուխը թափահարում։

Փողոցում ծեծեցին դարպասը, և իր բնում խոնչաց խոզը։ Քուչի-ապերը մղկտաց, պարզեց առջևի թաթերն ու գլուխը դրավ նրանց վրա։ Դարբասի թրխկթրխկոցը, չքնած խողի խոինչը, մթությունն ու լուռթյունը սարսափ էին ազդում շնիկին ճիշտ այնպես, ինչպես Շորոր-Սաթունի աղաղակը։ Հուզմունք և անհանգստություն

էր տիրում սենյակում։ Բայց ինչո՞ւ։ Ո՞վ էր այն ոտարը, վորը անտեսանելի յեր մնում։ Ահա Քուչի-ապոր մոտ հանկարծ փայլեցին յերկու աղոտ կանաչ կայծեր։ Դա Մռռան-պապին էր, վոր ծանոթության ընթացքում առաջին անգամ մոտեցավ շանը։ Ի՞նչ էր ուզում նա։ Շունը լիզեց նրա թաթը և, չհարցնելով նրա գալու նպատակը, ցածր ձայնով վռնաց։

— Կը-ղէ, —

բղավեց Շորոր-Սաթունը, — կը-ղէ-ղէ։

Նորից բացվեց դուռը, և ներս մտավ տերը մոմը ձեռքին։

Սազը նստած էր առաջվա պես՝ կտուցը բաց և թեվերը չռած։ Նրա աչքերը փակ էին։

— Շորոր-Սաթուն, — կանչեց տերը։

Սազը չշարժվեց։ Տերը նստեց հատակին՝ նրա առաջ. մի լուպե նայում էր նրան լուռ և ասաց.



— Շորոր-Խաթուն, սա ի՞նչ բան է: Մեռնում ես, ի՞նչ է: Ախ, յես այժմ հիշեցի, հիշեցի, — ձայն տվեց տերն ու ձեռքերով բռնեց գլուխը:

— Յես այժմ գիտեմ ինչից է այս բոլորը. սա նրանից է, վոր այսոր ձին քեզ վտանատակ տվեց: Ախ, այդ ինչ յեղանվ...

Քուչի-ապերը չեր հասկանում տիրոջ ասածը, սակայն նրա դեմքից յերևում էր, վոր նա յեւ մի սարսափելի բանի յե սպասում: Շնիկը դունչը յերկարացրեց դեպի մութ պատուհանը, վորտեղից, ինչպես թվում էր նրան, նայում էր այն ոտարը, և վռնաց:

— Նա մեռնում է, Քուչի, — ասաց տերը և ձեռքերը թափահարեց: — Այո, այո, մեռնում: Մահը մտել է ձեր սենյակը, ի՞նչ անենք մենք:

Տերը, գունատ ու հուզված, հառաչելով և գլուխը շարժելով, վերադարձավ իր ննջարանը: Կաշտանկալի համար սարսափելի յեր ֆնալ մութ տեղը, ուստի գնաց տիրոջ յետևից: Տերը նստեց մահճակալի վրա և մի քանի անգամ կրկնեց.

— Ախ, այս ի՞նչ պատահեց, ի՞նչ անեմ:

Քուչին ման էր գալիս նրա վտառների մոտ և հետևում նրա ամեն մի շարժումին, աշխատելով հասկանալ թե իր վշտի և թե բոլորի անհանգստության պատճառը: Մռու-պապին, վոր շատ սակավ էր թողնում իր ներքնակը, նույնպես մտավ ննջարան և սկսեց քսվել տիրոջ վտառներին: Նա գլուխը թափահարում էր, կարծես ուզենալով դուրս քշել այնտեղից ծանր մտքերը, և կասկածելի կերպով նայում իր մահճակալի տակ:

Տերը վերցրեց մի ափսե, լվացարանից մի քիչ ջուր լցրեց նրա մեջ և նորից գնաց սագի մոտ:

— Խմիր, Շորոր-Խաթուն, — ասաց նա քնքշությամբ, դնելով ափսեն նրա առաջ: — Խմիր, սիրելիս:

Բայց Շորոր-Խաթունը չշարժվեց և չբացեց աչքերը:

Տերը ծռեց սագի գլուխը դեպի ափսեն և նրա կտուցը դրեց ջրի մեջ, բայց սագը չխմեց, ավելի լայն բաց արավ թևերը, իսկ նրա գլուխը այնպես եւ ֆնաց ընկած ափսեյի մեջ:

— Վոչ, եւ վոչինչ չի կարելի անել, — հառաչեց տերը: — Ամեն ինչ վերջացած է: Կորավ Շորոր-Խաթունը:

Յեւ նրա այտերի վրայով ցած սահեցին փայլուն կաթիլներ, ինչպիսիք լինում են լուսամուտների ապակիների վրա անձրևի ժամանակ: Չհասկանալով բանի էությունը, Կաշտանկան ու Մռու-պապին սեղմվում էին տիրոջ և սարսափով նայում սագի վրա:

— Խեղճ Շորոր-Խաթուն, — ասում էր տերը, տխուր հառաչելով: — Իսկ յես յերազում եյի, վոր գարնանը քեզ ամառանոց կտանեմ և քեզ հետ կգրոսնեմ կանաչների վրա:



Սիրասուն կենդանի, իմ լավ ընկեր, դու եւ չկաս: Առանց քեզ յես եւ ի՞նչ անեմ: — Քուչի-ապորը թվում էր, վոր նրա հետ եւ նույնը

կապտահի, այսինքն մի որ ել նա այդպես անհայտ պատճառից կփակե աչքերը, թաթերը կպարզե, բերանը կբանա, և բոլորը նրա վրա սարսափով կնայեն: Ըստ յերևույթին, նման մտքեր թափառում եյին նաև Մուռան-պապիի գլխում: Պառավ կատուն առաջ յերբեք այդպես մռայլ չեր յեղել, ինչպես այժմ:

Լույսը բացվում եր. սենյակում ել չկար այն անտեսանելի ոտարը, վոր այնպես յերկյուղ եր ազդում Քուչի-ապորը: Յերբ բոլորովին լուսացավ, յեկավ դռնապանը, բռնեց սագի թաթերից և տարավ: Մի քիչ հետո հայտնվեց պառավն ու դուրս տարավ տաշտակը:

Քուչի-ապերը մտավ ընդունարան և նայեց պահարանի յետևը. տերը չեր կերել հավի վոտը, նա ընկած եր իր տեղում, փոշու և վոստայնի մեջ: Բայց Քուչի-ապերը ձանձրույթից և վշտից լաց լինել եր ուզում: Նա նույնիսկ չհոտոտեց վոտը, մտավ բազմոցի տակ, նստեց այնտեղ և սկսեց մեղմիկ և բարակ ձայնով մղկտալ.

— Ա՛հ-հ՛հ... ա՛հ-հ՛հ...



VII

ԱՆՀԱՋՈՂ ԴԵՖՅՈՒՏ

Մի գեղեցիկ յերեկո տերը մտավ կեղտոտ պաստառներով պատառած սենյակն ու, ձեռքերը շփելով, ասաց.

— Հապա:


Նա ելի մի բան եր ուզում ասել, բայց չասաց և հեռացավ: Քուչի-ապերը, դասերի ժամանակ լավ ուսումնասիրած լինելով նրա դեմքն ու խոսելու ձևը, գլխի ընկավ, վոր տերը հուզված եր, մտահոգված և կարծես բարկացած: Մի քիչ հետո նա վերադարձավ և ասաց.

— Այսոր յես կտանեմ ինձ հետ Քուչի-ապորն ու Մուռան-պապիին: Յեգիպտական բուրգում դու, Քուչի-ապեր, կփոխարինես հանգուցյալ Շորոր-Խաթունին: Սատանան գիտե, թե ինչ կլինի: Վոչինչ պատրաստ չե, սովորեցրած չե, փորձեր քիչ են յեղել: Կիսայտառակվենք:

Ապա նա նորից դուրս գնաց և մի բոպեյից հետո վերադարձավ մուշտակը հագած և գլանաձև գլխարկը դրած: Մոտենալով կատվին, նա բռնեց նրա առջևի թաթերից, բարձրացրեց վեր և պահեց նրան մուշտակի տակ, իր կրծքի վրա: Մուռան-պապին շատ սառնասիրտ եր թվում և աչքերն անգամ չբացեց: Նրա համար կարծես միևնույն եր՝ պառկած լինել, թե վոտքերից վեր բարձրացրած, փռված լինել ներքնակի վրա, թե հանգչել տիրոջ կրծքին, մուշտակի տակ...

— Քուչի-ապեր, գնանք, — ասաց տերը:

Վոչինչ չհասկանալով և պոչը շարժելով, Քուչի-ապերը գնաց նրա յետևից: Մի բոպեյից հետո նա արդեն նստած եր սահնակում, տիրոջ վոտքերի մոտ և լսում եր, թե ինչպես նա, ցրտից և հուզմունքից կուչ գալով, փնթփնթում եր.



— Կխայտառակվե՞նք, անհաջող կանցնի... —

Սահնակը կանգնեց մի մեծ, տարրերինակ տան մոտ, վորը նման էր շուռ տված թասի։ Այդ տան գլխավոր մուտքը ուներ յերեք ապակե դուռ և լուսավորված էր բազմաթիվ լուսավոր լապտերներով։ Դռները աղմուկով բացվում էին և, ինչպես հսկա բերաններ, կուլ էին տալիս մարդկանց, վորոնք խոնված էին դռների մոտ։ Մարդիկ շատ կային, հաճախ գլխավոր մուտքին մոտենում էին և ձիեր, սակայն շներ չէին յերևում։

Տերը Քուչի-ապորը բարձրացրեց ձեռքերի վրա և պահեց նրան մուշտակի տակ, կրծքի վրա, վորտեղ գտնվում էր Մուռան-պապին։ Այստեղ մութ ու խեղդուկ էր, բայց տաք։ Մի վայրկյան պլպլացին յերկու աղոտ, կանաչ կայծեր — դա կատուն էր բացել աչքերը, անհանգստացած՝ շան կոշտ և սառն թաթերի հպմանից։ Քուչի-ապերը լիզեց նրա ականջը և, ցանկանալով ավելի լավ տեղավորվել, անհանգիստ շարժումներ արավ, տրորեց նրան իր սառն թաթերով և հանկարծակի դուրս հանեց գլուխը մուշտակի տակից, բայց իսկույն և յեթ բարկացած մոմուց և պանկեց մուշտակի տակ։ Նրան այնպես թվաց, թե տեսավ մի անագին, վատ լուսավորված սենյակ, լիքը հրեշներով։ Սենյակի յերկու կողմերով ձգված անշատիչների և վանդակապատերի յետևից նայում էին դարհուրելի և այլանդակ դեմքեր — ձիանման, պողավոր, յերկարականջ, նրանց մեջ առանձնապես աչքի յեր ընկնում մի հաստ անուշիկ կերպարանք, վորը քթի տեղ պոչ ուներ և վորի բերանից դուրս էին ցցված յերկու կրծած վուկրներ։

Կատուն խուլոտ ձայնով մլավեց շան թաթերի տակ, բայց այդ ընկերին մուշտակը բացվեց, և տերն ասաց. «հոպ»։ Մուռան-պապին և Քուչի-ապերը թռան հատակին։ Նրանք արդեն մի փոքրիկ, գորշ,

տախտակե պատերով սենյակում եյին. այստեղ, բացի մի փոքրիկ սեղանից, հայելուց, աթոռից և անկյուններում կախկիսված փալաւաններից, ուրիշ վոչ մի կարասի չկար. լամպի կամ մոմի փոխարեն վառվում էր հովհարաձև լույսը, հարմարեցրած՝ պատի մեջ խրած խողովակի ծայրին: Մուռան-պապին լիզեց իր մուշտակը, վոր արորել էր Քուչի-ապերը, մտավ աթոռի տակ և պառկեց: Տերը, վոր դեռ հուզված էր, ձեռքերը շփելով, սկսեց հանվել... Նա հանվեց ճիշտ այնպես, ինչպես սովորաբար հանվում էր իր տանը տաք վերմակի տակ մտնելու համար, այսինքն հանեց բոլոր հագուստը, բացի սպիտակեղենից, հետո նստեց աթոռին և, նայելով հայելուն, սկսեց զարմանալի կերպով այլակերպել իրան: Ամենից առաջ գլխին դրավ պարիկ՝ յերկու պողպանման գոռակներով, ապա յերեսին քսեց մի տեսակ սպիտակ ներկ, տեղ-տեղ կարմրացրեց և շինեց հոնքեր և բեխեր: Հնարքները սրանով չվերջացան: Ներկելով յերեսն ու վիզը, նա սկսեց զգեստավորվել. հագավ մի անսովոր, վոչ մի բանի նմանութուն չունեցող հագուստ, վորի նմանը Քուչի-ապերը յերբեք չէր տեսել վոչ տներում և վոչ էլ փողոցներում: Յերևակայեցեք շատ լայն անդրավարտիկ, կարած խոշոր ծաղկավոր չիթից, վորալիսին գործ է ածվում քաղքենիների տներում վարագույրը կամ կարասին ծածկելու համար. մի անդրավարտիկ, վորը կոճկվում է հենց կոնստալին, վորի կեսը կարված է կինամոնագույն, մյուս կեսը՝ բաց-դեղնագույն չիթից: Թաղվելով նրա մեջ, տերը հագավ չիթե մի կոռուտիկ ևս մեծ, ատամնավոր ոձիքով, վոսկեգույն աստղը մեջքին, գույն-զգույն գուլպաներ և կանաչ կոշիկներ...

Քուչի-ապոր աչքերը շաղկեցին: Սպիտակադեմ, պարկանման այդ կերպարանքից տիրոջ հոտն էր գալիս, նրա ձայնը նույնն էր, տիրական, սակայն լինում էին բոպեններ, յերբ Քուչի-ապոր սիրտը կաս-

կած էր ընկնում. այդ ժամանակ նա պատրաստ էր փախչել խայտաբղետ կերպարանքից և հաջել: Նոր տեղը, հովհարաձև լույսը, հոտը, տիրոջ կերպարանափոխութունը, — այս բոլորը նրան յերկյուղ եյին ազդում, և մի նախագգացում հանգիստ չէր տալիս նրան. նրան թվում էր, թե ուր վոր է՝ նրա հետ կպատահի մի սարսափելի բան, նման այն հաստ, քթի տեղ պոչ ունեցող կերպարանքին: Այդ դեռ բավական չէ, վորտեղից վորտեղ, պատի այն կողմը, հեռու նվազում էր ատելի յերաժշտախումբը, և ժամանակ առ ժամանակ լսվում էր անհասկանալի մոնչյուն: Մի բան միայն հանգստացնում էր նրան, դա Մուռան-պապի անվրդովութունն էր: Նա հանգիստ նիրհում էր աթոռի տակ և չէր բացանում աչքերը նույնիսկ այն ժամանակ, յերբ աթոռը շարժվում էր:



Ինչ վոր մի մարդ, ֆուակ և սպիտակ ժիլետ հագած, ներս նայեց ու ասաց.

— Հիմա դուրս կգա որիորդ Արաբելլան, նրանից հետո՝ դուք։
Տերը վոչինչ չպատասխանեց։ Նա դուրս բերեց սեղանի տակից մի փոքրիկ ճանապարհորդական պայուսակ, նստեց և սպասում էր։ Նրա շրթունքներից և ձեռքերից յերևում էր, վոր նա հուզված է, և Քուչի-ապերը լսում էր, թե ինչպես էր դողդողում նրա շնչառութիւնը։

— Պարոն ժորժ, համեցեք, — ձայն տվեցին դռան յետևից։
Տերը կանգնեց, նայեց հայելուն, հետո հանեց աթոռի տակից կատվին և դրեց պայուսակի մեջ։

— Յե՛կ, Քուչի-ապեր, — ասաց նա կամացուկ։
Քուչի-ապերը, վոչինչ չհասկանալով, մոտեցավ նրա ձեռքերին. տերը համբուրեց նրա գլուխն ու դրավ նրան կատվի կողքին։ Սրանից հետո մոլթը պատեց... Քուչի-ապերը կոխտոտում էր կատվին, չանգոտում էր պայուսակի պատերը և սարսափից չէր համարձակվում ծպտուն հանել. իսկ պայուսակը որորվում էր, վորպես ալիքներից, և դողում...

— Ահա և յես, — բարձր աղաղակեց տերը։ — Ահա և յես։
Քուչի-ապերն զգաց, վոր դրանից հետո պայուսակը դիպավ մի պինդ բանի և դադարեց որորվելուց։ Լսվեց բարձր և հուժկու աղաղակ. մեկին թակում էին. և այդ մեկը, հավանորեն, քթի տեղ պոչ ունեցող կերպարանքը, մոնչում և քրքշում էր այնպես բարձր, վոր պայուսակի փականքները դողդողացին։ Վորպես պատասխան այդ մոնչոցին, լսվեց տիրոջ սուր և ճշան ծիծաղը. այդպես նա յերբեք չէր ծիծաղել տանը։

— Հա, — աղաղակեց նա, աշխատելով խլացնել մոնչյունը։ — Հարգելի հասարակութիւն, յես հենց հիմա կայարանից եմ գալիս։ Իմ տատս մեռավ և թողեց ինձ ժառանգութիւն։ Պայուսակում

ինչ վոր շատ ծանր բան կա. հավանորեն, վոսկի... Հա՛ա։ Յե՛կ հանկարծ այստեղ միլիոն լինի։ Հենց իսկույն մենք կբանանք և կնայենք։ — Պայուսակի փականը չըխկաց։ Պայծառ լույսն ընկավ Քուչի-ապոր աչքերին, նա դուրս թռավ պայուսակից և, աղմուկից խլացած, ամբողջ թափով և զիլ հաջոցով սկսեց պտույտ գալ տիրոջ շուրջը։

— Հա՛, — աղաղակեց տերը. — Մոռան-պապի, թանկագին Քուչի, սիրելի ազգականներս, սատանան ձեզ տանի։

Նա յերեսնիվայր ընկավ ավազի վրա, բռնեց կատվին և շանը և սկսեց գգվել նրանց։ Այն ժամանակ, յերբ տերը սեղմում էր նրանց իր գրկում, Քուչի-ապերը աչքի տակով նայեց այն աշխարհին, ուր գցել էր նրան բախտը. նա, այդ աշխարհի անաղնութիւնից ազդված, մի րոպե սառած մնաց զարմանքից և հիացմունքից, հետո դուրս պրծավ տիրոջ գրկից և տպավորութիւնների ու ժեղութիւնների հովի նման սկսեց պտտվել միևնույն տեղում։ Նոր աշխարհը մեծ էր և լի, պայծառ, լուսավոր։ Ուր էլ նայես, հատակից սկսած մինչև առաստաղը, յերևում էին միայն դեմքեր, դեմքեր, դեմքեր և ուրիշ վոչինչ։

— Քուչի-ապեր, խնդրում եմ ձեզ նստել, — ձայն տվեց տերը։

Հիշելով այդ բառերի նշանակութիւնը, Քուչի-ապերը թռավ աթոռին և նստեց։ Նա նայեց տիրոջ։ Նրա աչքերը, ինչպես միշտ, նայում էին լրջութեամբ և փաղաքշանքով, սակայն դեմքը, առանձնապես բերանն ու ատամները, այլանդակված էին մի տեսակ անշարժ ժպիտով։ Նա ինքը քրքշում էր, թռչկոտում, ուսերը վեր քաշում և այնպես էր ձևացնում, վոր նրան շատ է ուրախացնում հազարավոր մարդկանց ներկայութիւնը։ Քուչի-ապերն հավատաց նրա ուրախութեանը, հանկարծ իր ամբողջ մարմնով զգաց, վոր այդ բաղմութիւնը իրան է նայում, ուստի վեր ցցեց իր աղվեսադունչն ու ուրախ վռնաց։

— Դո՛ւք, Քուչի-ապեր, նստեցեք, — ասաց նրան տերը, — իսկ յետ ու պապին կպարենք կամարինսկի:

Մուռն-պապին, վոր սպասում եր թե յերբ կստիպեն նրան հիմարություններ անել, անփութ ու սառնասիրտ նայում եր չորս կողմը: Պարեց նա դանդաղ, անփութ ու մռայլ. նրա շարժումներից, պոչից և բեխերից յերևում եր, վոր նա խորապես արհամարհում ե և՛ ամբոխը, և՛ պայծառ լույսը, և՛ տիրոջը, և՛ իրան... Վերջացնելով իր բաժինը, նա հորանջեց և նստեց:

— Հապա, Քուչի, — ասաց տերը, — քեզ հետ նախ յերգենք, ապա պարենք: Լա՛վ:

Նա գրպանից հանեց սրինգն ու նվագեց: Քուչի-ապերը, վոր տանել չեր կարողանում յերաժշտությունը, անհանգիստ շարժումներ արավ աթոռի վրա և վռնաց: Ամեն կողմից լսվեցին աղմուկ և ծափահարություններ: Տերը գլուխ տվեց, և յերբ ամեն ինչ լռեց, շարունակեց նվագել... Յերկրորդ նվագի ժամանակ վերևում, հասարակության մեջ լսվեց մի աղաղակ.

— Հայրի՛կ, ախր դա Կաշտանկան ե:

— Կաշտանկան ե վոր կա, — հաստատեց հարբած ու դողդոջուն մի ուրիշ ձայն: — Կաշտանկան ե, Պետիկ, հավատա Կաշտանկան ե:

— Հո՛ւյտ: — Պատշգամբում մեկը շվվացրեց, և յերկու ձայն, մեկը մանկական, մյուսը առնական, բարձր կանչեցին.

— Կաշտանկա, Կաշտանկա:

Քուչի-ապերը ցնցվեց և նայեց այն կողմը, վորտեղից կանչում էին: Ինչպես առաջ պայծառ լույսը, այնպես ել հիմա նրա աչքին ընկան յերկու դեմքեր. մեկը մազոտ, հարբած ու ժպտուն, մյուսը՝ լիքը, կարմրաթուշ և վախեցած: Նա հիշեց, ընկավ աթոռից, կուչ ու ձիգ արավ ափաղի վրա, հետո վեր թռավ և ուրախ կրնձկրն-



ծոցով թռավ դեպի այդ դեմքերը: Լսվեց խլացուցիչ աղաղակ, խառն-ված շվվոցների հետ, վորի մեջ պարզ լսվում էր մանկական զիլ կանչը՝

— Կաշտանկա, Կաշտանկա:

Կաշտանկան թռավ, նախ վանդակապատի, ապա հանդիսական-ներից մեկի ուսի վրայով, և ընկավ ոթյակներից մեկը. վրայի շարքը



բարձրանալու համար հարկավոր էր անցնել մի բարձր պատ: Կաշտան-կան թռավ, բայց չհասցրեց, և յետ սահեց պատի յերեսով: Հետո նա ձեռքից ձեռք անցնելով, սրա ու նրա ձեռքերն ու յերեսը լիզելով, բարձրանում էր վեր ու վեր և, վերջապես, հասավ պատշգամբին...

Կես ժամից հետո Կաշտանկան գնում էր փողոցով այն մարդկանց յետևից, վորոնցից ստանձի և լակի հոտ էր գալիս: Վարպետ թորոսը որորվում էր և բնազդաբար ու փորձից խրատված, աշխատում էր հեռու քայլել փոսից:

Նա փնթփնթում էր.

— Իսկ դու, Կաշտանկա, աննշան եյակ ես և ուրիշ վոչինչ: Մարդու հետ համեմատած դու նույնն ես, ինչ վոր հյուսնը սեղանա-գործի առաջ:

Հոր կողքից գնում էր Պետիկը, նրա հին գլխարկը դրած: Կաշ-տանկան նայում էր նրանց թիկունքին և նրան այնպես էր թվում, թե վաղուց արդեն գնում է նրանց յետևից, և ուրախանում, վոր իր կյանքը վոչ մի րոպե չի ընդհատվել և չի փոխվել:

Հիշեց նա կեղտոտ պաստառներով սենյակը, հիշեց սագին, Մուսան-պապիին, համեղ ճաշերը, վարժություններն ու կրկեսը, սակայն այժմ այս բոլորը յերկար, խառնաշփոթ և ծանր յերազ էր թվում նրան:

ԽԱՅՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԲՈՒՅԿՆԵՐ

Լույս եկեալ	(մեծադիր, նկարազարդ)	
ՅԵՐԿՐԻ ԽՈՐՔԵՐՈՒՄ	»	15 Լ.
ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒՑԶԿԱՆ	»	28 Լ.
ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊԼԱՆՈՎ	»	28 Լ.
ՄՈԾԱԿԻ ՅԵՎ ԱՐՋԻ ՄԱՍԻՆ	»	15 Լ.
ԻՆԶՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿՆԻԿՆԵՐԸ	»	16 Լ.
ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ	»	18 Լ.
ՅԵՐԱԺԻՇՏ ԴԱՆԻԿԸ	»	33 Լ.
ԴՈՇԻԿԸ ՃԱՀՃՈՒՄ	»	20 Լ.
ՏԻՄԸ	»	30 Լ.
ՓՈՔՐԻԿ ԽՈՆ	»	18 Լ.
ՌԻԿԿԻ-ՏԻԿԿԻ-ՏԱՎԻ	»	25 Լ.
ՀՆԴԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ	»	25 Լ.
ՍԱՌՅԻ ՎՐԱ	»	35 Լ.
ԻՆԶՈՎ ԿՈՒՑԵՅԻՐ ՃԱՄԲՈՐԴԵԼ	»	12 Լ.
ԹԵ ԻՆԶՊԵՍ ՍԱՔՈՆ ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԱՅԻՆ ԴԱՐՁԱՎ	»	12 Լ.
ԱՆՁՆՎԵՐ ՏՂԱՆ	»	8 Լ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ	»	20 Լ.
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ	»	25 Լ.
ՌԱԶՄԻ ՈՐԵՐ		
ԹՈՉՈՒՆՆԵՐ (գրականական աշխատ)		

Տպագրվում են

ՏՈՆ ՈՐՎԱ ԳԻՇԵՐԸ	(մեծադիր, նկարազարդ)
ՃՈՒՏԻԿԸ ՅԵՎ ԿՈՒՏԻԿԸ	»
ԿԻՇԸ	»
ԽՈՐԴԻԱՆ	»

Գլխավոր պահեստը — Москва, Никольская, 10, Центриздат.
Պահանջեցե՛ք մեր բոլոր գրքերի գրացուցակը, վոր ուղարկվում է ձեր.

ՀՀ Ազգային գրադարան



NL0391384

40 ԿՈՊ.

2121

4557



А. Чехов
КАШТАНКА

На армянском языке.

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10.

891 715

2-34